



Համարը N 27

Տիպը Պաշտոնական պարզաբանում
Սկզբնաղբյուրը ՀՀԳՏ 2012.12.03/29(442)
Ընդունող մարմինը Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ

Ստորագրող մարմինը Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ

Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 01.11.2012

Տեսակը Հիմնական

Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան
Ընդունման ամսաթիվը 01.11.2012

Ստորագրման ամսաթիվը 01.11.2012

Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

Կապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ՈՒԺԻ ՄԵԶ ՄՏՆՈՂ «ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՄԱՍԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայնեցված է
ՀՀ ֆինանսների նախարար
_____ Վ. Գաբրիելյան

ՀՀ կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտեի նախագահ
_____ Գ. Խաչատրյան
1 նոյեմբերի 2012 թ.
N 27

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ

2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ՈՒԺԻ ՄԵԶ ՄՏՆՈՂ «ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՄԱՍԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ է մտնում 01.01.2013թ-ից: Նույն պահից ուժը կորցրած են ճանաչվում «Եկամտահարկի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքները: Մինչև 01.01.2013թ-ը գործող «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև ՀՀ պետական եկամուտների նախարարության 16.04.2001թ. N 02/456 հրամանով հաստատված «Եկամտահարկի հաշվարկման և բյուջե վճարման կարգի մասին» հրահանգի 25.1-րդ կետի համաձայն վարձու աշխատողներին (Հայաստանի Հանրապետության քաղաքացի, օտարերկրացի) վճարված ժամանակավոր անաշխատունակության նպաստների (հիվանդության նպաստ, պրոթեզավորման նպաստ, առողջարանային բուժման նպաստ, հղիության ու ծննդաբերության նպաստ, ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստ) գումարները ներառվում են նրանց համախառն եկամտի մեջ որպես այն ամիսների ստացված եկամուտներ, որ ամիսների համար այդ նպաստները հաշվարկվել են, սակայն հարկային գործակալի եռամսյակային հաշվարկում արտացոլվում են դրանց վճարման ամսվան վերաբերող պլանակում՝ աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված վճարումներին համապատասխանող տողում: Հաշվի առնելով վերը նշվածը, ինչպես նաև «Եկամտահարկի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքների փոխարեն 01.01.2013թ-ից «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելու հետ կապված անցման ժամանակահատվածում առաջացող հարկման հարցերի հստակեցման անհրաժեշտությունը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասով, **պաշտոնապես պարզաբանում եմ.**

1. 2012թ-ին առաջացած և 2013թ-ին շարունակվող վարձու աշխատողի հղիության և ծննդաբերության արձակուրդի դեպքերում «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով վճարված նպաստի գումարները հարկվում են հետևյալ կերպ՝

ա) 2012թ-ին ներկայացված ժամանակավոր անաշխատունակության թերթիկի հիման վրա 2012թ-ին վճարված նպաստի գումարները հարկվում են եկամտահարկով՝ «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով (այդ թվում՝ 2013թ-ին բաժին ընկնող ժամանակահատվածի համար):

Այդ դեպքում նպաստի գումարները և եկամտահարկը արտացոլվում են 2012թ. եկամտահարկի եռամսյակային հաշվարկներում, իսկ նպաստի գումարները՝ նաև պարտադիր սոցիալական ապահովության վճարների եռամսյակային հաշվետվություններում՝ այն ամսում, երբ կատարվել է վճարումը, և 2013թ-ին վերահաշվարկ չի կատարվում.

բ) 2012թ-ին ներկայացված ժամանակավոր անաշխատունակության թերթիկի հիման վրա 2013թ-ին վճարված նպաստի գումարները հարկվում են եկամտային հարկով՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով (այդ թվում՝ 2012թ-ին բաժին ընկնող ժամանակահատվածի համար):

Այդ դեպքում նպաստի գումարները և եկամտային հարկը արտացոլվում են 2013թ. եկամտային հարկի ամսական հաշվարկներում.

գ) 2013թ-ին ներկայացված ժամանակավոր անաշխատունակության լրացուցիչ թերթիկի հիման վրա ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածի համար վճարված նպաստի գումարները հարկվում են եկամտային հարկով՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով (այդ թվում՝ 2012թ-ին բաժին ընկնող ժամանակահատվածի համար):

Այդ դեպքում նպաստի գումարները և եկամտային հարկը արտացոլվում են 2013թ. եկամտային հարկի ամսական հաշվարկներում:

2. 2012թ-ին առաջացած և 2013թ-ին շարունակվող վարձու աշխատողի ժամանակավոր անաշխատունակության (բացառությամբ՝ հղիության և ծննդաբերության) դեպքերում «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով վճարված նպաստի (հիվանդության նպաստ, պրոթեզավորման նպաստ, առողջարանային բուժման նպաստ, ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստ) գումարները հարկվում են հետևյալ կերպ՝

ա) 2012թ-ին ներկայացված ժամանակավոր անաշխատունակության թերթիկի հիման վրա 2012թ-ին վճարված նպաստի գումարները հարկվում են եկամտահարկով՝ «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Այդ դեպքում նպաստի գումարները և եկամտահարկը արտացոլվում են 2012թ. եկամտահարկի եռամսյակային հաշվարկներում, իսկ նպաստի գումարները՝ նաև պարտադիր սոցիալական ապահովության վճարների եռամսյակային հաշվետվություններում՝ այն ամսում, երբ կատարվել է վճարումը.

բ) 2012թ-ին ներկայացված ժամանակավոր անաշխատունակության թերթիկի հիման վրա 2013թ-ին վճարված նպաստի գումարները հարկվում են եկամտային հարկով՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Այդ դեպքում նպաստի գումարները և եկամտային հարկը արտացոլվում են 2013թ. եկամտային հարկի ամսական հաշվարկներում.

գ) 2013թ-ին ներկայացված ժամանակավոր անաշխատունակության թերթիկի հիման վրա վճարված նպաստի գումարները հարկվում են եկամտային հարկով՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով (այդ թվում՝ 2012թ-ին բաժին ընկնող ժամանակահատվածի համար):

Այդ դեպքում նպաստի գումարները և եկամտային հարկը արտացոլվում են 2013թ. եկամտային հարկի ամսական հաշվարկներում: